ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.07.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/194

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի (պետական գրանցման վկայական համար՝ 264.1070858),

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացուցիչ Վ. Ոսկանյանի (լիազորագիր՝ տրված 27.07.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.07.2021թ. թիվ 26/26-1/11710-2021 գրությամբ Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 15.07.2021թ. թիվ 02/03.5/3643-2021 գրության հիման վրա 21.07.2021թ. թիվ 26/26-1/11710-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/194 ընթացակարգի քննության նպատակով 28.07.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի միջև ընտանի կենդանիների կերի մատակարարման նպատակով կնքվել է գնման պայմանագիր: Ըստ Պայմանագրի Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսը պարտավորվել է մատակարարել տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքը: Ապրանքը մատակարարելուց հետո Պատվիրատուի կողմից տրվել է բացասական եզրակացություն, այն հիմքով, որ Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի կողմից մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրին և տրամադրվել է ողջամիտ ժամկետ ապրանքը փոխարինելու համար, մինչդեռ մատակարարված ապրանքը չի փոխարինվել, քանի որ այն ամբողջությամբ համապատասխանել է պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրին»:

3. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.07.2021թ. թիվ 02/03.5/3643-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի միջև 06.05.2021թ-ին կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/45 պայմանագրի շրջանակներում Դավիթ Հովհաննիսյան

Հովհաննեսի ԱՁ-ի կողմից մատակարարված ապրանքը չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին: Նախարարության կողմից սահմանված ժամկետում (30 օրացուցային օր) մատակարարված ապրանքը չի փոխարինվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ Նախարարությունը 12.07.2021թ. թիվ 02/03.5/3565-2021 գրությամբ միակողմանի լուծել է թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/45 պայմանագիրը:

Ղեկավարվելով Կարգի 45-րդ կետով, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» պարբերությունը՝ Ձեզ եմ ներկայացնում Պայմանագրի լուծման տեղեկատվությունը համապատասխան հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/194 ընթացակարգի քննության նպատակով 28.07.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը, միևնույն ժամանակ հայտնել, որ Պատվիրատուի կողմից բացասական եզրակացությունը տրվել է հիմք ընդունելով Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի կողմից ընթացակարգի շրջանակներում ներկայացված հավելված 1.1-ը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/194 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/194 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի միջև 06.05.2021թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/45» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված

ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.2-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝ չընդունել ապրանքն իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

3. Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «Ընտանի կենդանիների կեր»-ի մատակարարումը՝ ենթակա քանակը 1000 կգ պետք է իրականացվի 2021թ.՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 30.06.2021թ., իսկ 1190 կգ-ը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 30.09.2021թ.-ը:

4. Պայմանագրին կից հավելված N 1/1-ը՝ Տեխնիկական բնութագիրը սահմանվել է հետևյալ ձևով՝

Հավելված N 1/1
«06» 05 2021 թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/45 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Տեխնիկական բնութագիրը
1.	Ընտանի կենդանիների կեր		Չոր կեր՝ հասուն շների համար, պրեմիում դասի: Հիմնական բաղադրամասերը՝ միս և մսեղիք, հացահատիկներ, բուսական յուղ, բուսական ծագման սպիտակուցներ, ձուկ և ձկնային մսեղիքներ, հանքային նյութեր, վիտամիններ: Բաղադրությունը. - սպիտակուցներ՝ առնվազն 30.0 % - ***ճարպեր՝ առնվազն 15.0 %*** - թաղանթանյութ՝ առնվազն 6.7 % - մոխրանյութ՝ առնվազն 8.5 % - խոնավություն՝ առնվազն 8.0 % - վիտամին A՝ առնվազն 6700 մկր.միավ./կգ - վիտամին D3՝ առնվազն 600 մկր.միավ./կգ ***- կալցիում՝ առնվազն 1.4 %*** - ֆոսֆոր՝ առնվազն 0.9 % ***- պղինձ /պղնձի սուլֆատ/ 11 մգ/կգ*** Կալորիականությունը՝ առնվազն 3800 կկալ/կգ: Փաթեթավորումը՝ առնվազն 14+/-1 կգ:

			Պիտանելիության ժամկետը մատակարարման պահից հաշված առնվազն՝ 1 տարի: Ապրանքը գործարանային արտադրության և փաթեթավորմամբ: Փաթեթները պիտակավորված, պիտակի վրա նշված արտադրողի անվանումը, արտադրության և պահպանման ժամկետները, արտադրանքի բաղադրությունը:

5. Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուն Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ին ուղղված գրությամբ ներկայացրել է 20.05.2021թ. պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ կազմված N 33 եզրակացությունը, համաձայն որի արձանագրվել է հետևյալը՝

«Նշված ապրանքը չի համապատասխանում պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրին. Մասնավորապես՝

-ճարպեր՝ առնվազն 15.0 % - 18.0%-ի փոխարեն,

-կալցիում՝ առնվազն 1,4 % - 1,5%-ի փոխարեն,

- պղինձ /պղնձի սուլֆատ/ 11 մգ/կգ-18մգ/կգ-ի փոխարեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ընդունող հանձնաժողովը տալիս է բացասական եզրակցություն և համաձայն պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի սահմանում է ողջամիտ ժամկետ (30 օրացուցային օր) ապրանքը փոխարինելու համար»:

6. Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ին ուղղված 12.07.2021թ. թիվ 02/03.5/3565-2021 ծանուցմամբ Պատվիրատուն մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի միջև 06.05.2021թ-ին կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/45 պայմանագրի շրջանակներում Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի կողմից մատակարարված ապրանքը չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին: Համաձայն պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի՝ 21.05.2021թ. սահմանվել է ողջամիտ ժամկետ (30 օրացուցային օր) ապրանքը փոխարինելու համար, ինչը սահմանված ժամկետում չի փոխարինվել:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ Նախարարությունը միակողմանի լուծում է ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/45 ծածկագրով պայմանագիրը»:

7.Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 13.07.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.07.2021թ. թիվ 26/26-1/11710-2021 գրությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 15.07.2021թ. թիվ 02/03.5/3643-2021 գրությունը և կից փաստաթղթերը, ՍՑ-ՆԳ-2021/194 ընթացակարգի քննության ընթացքում Պատվիրատուի ներկայացուցչի և Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի կողմից հայտնած դիրքորոշումները, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:

Օրենսգրքի 448-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

2. Պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով:

Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ ***<u>Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:</u>***

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրի 8-րդ կետի 8.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:***

Այսպես, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի միջև 06.05.2021թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/45» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «Ընտանի կենդանիների կեր»-ի մատակարարումը՝ ենթակա քանակը 1000 կգ պետք է իրականացվի 2021թ.՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 30.06.2021թ., իսկ 1190 կգ-ը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 30.09.2021թ.-ը:

Համաձայն ***Պայմանագրին կից հավելված N 1/1-ի՝ Տեխնիկական բնութագիրը սահմանվել է հետևյալ ձևով՝***

Հավելված N 1/1
«06» 05 2021 թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/45 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Տեխնիկական բնութագիրը
3.	Ընտանի կենդանիների կեր		Չոր կեր՝ հասուն շների համար, պրեմիում դասի: Հիմնական բաղադրամասերը՝ միս և մսեղիք, հացահատիկներ, բուսական յուղ, բուսական ծագման սպիտակուցներ, ձուկ և ձկնային մսեղիքներ, հանքային նյութեր, վիտամիններ: Բաղադրությունը.

			- սպիտակուցներ՝ առնվազն 30.0 % - ***<u>ճարպեր՝ առնվազն 15.0 %</u>*** - թաղանթանյութ՝ առնվազն 6.7 % - մոխրանյութ՝ առնվազն 8.5 % - խոնավություն՝ առնվազն 8.0 % - վիտամին A՝ առնվազն 6700 մկր.միավ./կգ - վիտամին D3՝ առնվազն 600 մկր.միավ./կգ ***<u>- կալցիում՝ առնվազն 1.4 %</u>*** - ֆոսֆոր՝ առնվազն 0.9 % ***<u>- պղինձ /պղնձի սուլֆատ/ 11 մգ/կգ</u>*** Կալորիականությունը՝ առնվազն 3800 կկալ/կգ: Փաթեթավորումը՝ առնվազն 14+/-1 կգ: Պիտանելիության ժամկետը մատակարարման պահից հաշված առնվազն՝ 1 տարի: Ապրանքը գործարանային արտադրության և փաթեթավորմամբ: Փաթեթները պիտակավորված, պիտակի վրա նշված արտադրողի անվանումը, արտադրության և պահպանման ժամկետները, արտադրանքի բաղադրությունը:

Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուն Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ին ուղղված գրությամբ ներկայացրել է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 20.05.2021թ. կազմված N 33 եզրակացությունը, համաձայն որի արձանագրվել է հետևյալը՝

«Նշված ապրանքը ***չի համապատասխանում պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրին. Մասնավորապես՝***

-***<u>ճարպեր՝ առնվազն 15.0 % - 18.0%-ի փոխարեն,</u>***

<u>-կալցիում՝ առնվազն 1,4 % - 1,5%-ի փոխարեն,</u>

<u>- պղինձ /պղնձի սուլֆատ/ 11 մգ/կգ-18մգ/կգ-ի փոխարեն:</u>

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ընդունող <u>հանձնաժողովը տալիս է բացասական եզրակցություն</u> և համաձայն պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի սահմանում է ողջամիտ ժամկետ (30 օրացուցային օր) ապրանքը փոխարինելու համար»:

Այնուհետև՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ին ուղղված 12.07.2021թ. թիվ 02/03.5/3565-2021 ծանուցմամբ՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի միջև 06.05.2021թ-ին կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/45 պայմանագրի շրջանակներում Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի կողմից մատակարարված ապրանքը չի համապատասխանում տեխնիկական բնութագրի

պահանջներին: Համաձայն պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի՝ 21.05.2021թ. սահմանվել է ողջամիտ ժամկետ (30 օրացուցային օր) ապրանքը փոխարինելու համար, ինչը սահմանված ժամկետում չի փոխարինվել:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ Նախարարությունը միակողմանի լուծում է ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/45 ծածկագրով պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 13.07.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ Պայմանագրի 2-րդ կետի 2.1.2-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ ***եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ <u>պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք</u>***՝ չընդունել ապրանքն իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

Պայմանագրի 5.3-րդ կետի համաձայն՝ ***եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում <u>պայմանագրի պայմաններին</u>***, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և ***դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը***: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Վերը շարադրված կարգավորումների համաձայն՝ Գնորդի կողմից տրվում է բացասական եզրակացություն, այն դեպքում եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին:

Այսպիսով՝ գործով առկա փաստերի համաձայն՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից կազմված 20.05.2021թ. N 33 բացասական եզրակացությամբ արձանագրվել էր, որ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրին, մինչդեռ՝ ուսումնասիրելով բացասական եզրակությամբ

արձանագրված անհամապատասխանությունները և այն համադրելով կողմերի միջև կնքված Պայմանագրին կից հավելված N 1/1-ի՝ Տեխնիկական բնութագրի հետ, արձանագրում եմ, որ առկա չէ որևէ անհամապատասխանություն, ինչն ինքնին հերքում է Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու փաստը, ուստի գտնում եմ, որ նշված հիմքով Պատվիրատուն սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և այնուհետև՝ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի ԱՁ-ի կողմից չփոխարինելու հիմքով լուծելով պայմանագիրը գործել է ոչ իրավաչափ:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.07.2021թ. թիվ 26/26-1/11710-2021 գրությամբ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**